ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» դեկտեմբերի 2011թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 300 որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող Դրոյի փողոց հհ.22/5 և 30 հասցեներում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի արտոնություն՝ 1.025.654 (մեկ միլիոն քսանհինգ հազար վեց հարյուր հիսունչորս) դրամի չափով, որից ապառք՝ 549.500 (հինգ հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր) դրամ, տույժ՝ 476.154 (չորս հարյուր յոթանասունվեց հազար մեկ հարյուր հիսունչորս) դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող շինության գույքահարկի գծով հարկային պարտավորությունները /գույքահարկով հարկվող օբյեկտի/ առ 01.12.2011թ. դրությամբ կազմում են 1.025.654 դրամ (որից 549.500 դրամ ապառք, 476.154 դրամ տույժ), որի համար 15.11.2011թ. հ. 40-11/2011 գրությամբ դիմել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին՝ վերջինս էլ 16.11.2011 հ. 31/01-3/301.398646 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը 2006 թվականից իրականացնում է մի շարք բարեգործական ծրագրեր, այդ թվում բարեգործական ճաշարան՝ 250 շահառուների համար, տնային սպասարկում հաշմանդամ, անօգնական, միայնակ անձանց համար, ինչպես նաև կազմակերպում է այլ տարաբնույթ միջոցառումներ սոցիալապես անապահով խավի համար:

Հատկանշական է այն փաստը, որ կազմակերպության կողմից հաշվարկված գույքահարկի գծով հարկային պարտավորությունները մարելու դեպքում, նկատելի ձևով կնվազի հաշմանդամ, անօգնական և միայնակ անձանց ցուցաբերվող օժանդակությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից մշտապես իրականացվող բարեգործական գործունեությունը, առաջարկվում է Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի նկատմամբ սահմանել 1.025.654 (մեկ միլիոն քսանհինգ հազար վեց հարյուր հիսունչորս) դրամի չափով գույքահարկի արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին սեփականության իրավունքով պատկանող Դրոյի փող. հհ. 22/5 և 30 հասցեներում գտնվող շինության գույքահարկի գծով հարկային պարտավորությունները /գույքահարկով հարկվող օբյեկտի/ կազմում են առ՝ 01.12.2011թ-ի դրությամբ 1.025.654 (մեկ միլիոն քսանհինգ հազար վեց հարյուր հիսունչորս) դրամ, որից ապառք՝ 549.500 (հինգ հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր) դրամ, տույժ ՝ 476.154 (չորս հարյուր յոթանասունվեց հազար մեկ հարյուր հիսունչորս) դրամ, որի համար 15.11.2011թ. հ. 40-11/2011 գրությամբ դիմել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին՝ վերջինս էլ 16.11.2011թ. հ. 31/01-3/301.398646 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին, գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի դիմումը ուղղված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին, վերջինս էլ՝ Երևանի քաղաքապետին, գույքահարկի արտոնություն ստանալու վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպության կողմից հաշմանդամ, անօգնական և միայնակ անձանց ցուցաբերվող օժանդակությունը, նպատակահարմար եմ գտնում Գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին տրամադրել 1.025.654 (մեկ միլիոն քսանհինգ հազար վեց հարյուր հիսունչորս) դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» որոշման նախագծի առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում և/կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**